# ԿԱՐԾԻՔ

Կարեն Հովհաննեսի Հովհաննիսյանի

«Թուխ Մանուկ սրբավայրերը (պատմաազգագրական ուսումնասիրություն)»՝

Է.00.04 «Ազգագրություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Հայոց ինքնության առանցքային ցուցիչներից է ժողովրդական մշակույթը, որի անբակտելի մաս է ժողովրդական քրիստոնեությունը: Վերջինս պաշտոնական քրիստոնեության հենասյուներից է և դրա կենսագործունեության ապահովման բաղադրիչներից մեկը: Ժողովրդական քրիստոնեությունը, որպես մշակութային ուրույն երևույթ, արևմտյան գիտության կողմից ուսումնասիրվել է XX դարի 60-ականներից: Վերջին տասնամյակներում ժողովրդական քրիստոնեության հետազոտությունն արդիական է դարձել նաև հայագիտության համար՝ պայմանավորված ազգային-հոգևոր մշակութային արժեքների պահպանման և արդի սոցիալ-մշակութային միջավայրին համընթաց վերարտադրություն ապահովելու անհրաժեշտությամբ:

Հայ ժողովրդական քրիստոնեությանը նվիրված աշխատությունների շարքը համալրելուն է միտված Կ. Հովհաննիսյանի՝ հրապարակային պաշտպանության ներկայացրած «Թուխ Մանուկ սրբավայրերը (պատմաազգագրական ուսումնասիրություն)» վերնագրով ատենախոսությունը:

Ներածության մեջ հեղինակը հստակորեն սահմանել է նպատակը. «հնարավորինս համակողմանիորեն ներկայացնել Թուխ Մանուկ սրբավայրերը. դրանց տարածվածությունը, գործառույթները, պաշտամունքը՝ ծիսական արարողությունները, հավատալիքային և բանահյուսական նյութը, այդ ամենի հիման վրա փորձել նաև դուրս բերել Թուխ Մանուկի կերպարը» (էջ 4)՝ միաժամանակ շեշտելով, որ «... աշխատանքի հետազոտության խնդիրներից դուրս է Թուխ Մանուկ սրբավայրերի և Թուխ Մանուկ սրբի ծագումնաբանական քննությունը, թեև կատարվել են որոշ ենթադրություններ» (էջ 19): Հեղինակը հիմնավորել է թեմայի արդիականությունը, կիրառական նշանակությունը, կիրառված

մեթոդաբանության անհրաժեշտությունը, սրբավայրը Թուխ Մանուկ դիտարկելու սկզբունքը:

Աշխատանքի նորույթը դրսևորվել է հետևյալ բաղադրիչներում. 1) *աղբյուրագիտական.* ատենախոսն առաջին անգամ գիտական դաշտ է բերում 2011-2018 թթ. Երևանից և ՀՀ ութ մարզերի (Արագածոտն, Գեղարքունիք, Շիրակ, Կոտայք, Արարատ, Լոռի, Վայոց Ձոր, Արմավիր) ավելի քան 100 քաղաքային և գյուղական բնակավայրերից ու գյուղատեղիներից գրանցած մեծածավալ դաշտային ազգագրական և բանագիտական նյութ, որը կազմում է ատենախոսության հենքը, ինչպես նաև ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի և ՀՅԴ Բոստոնի արխիվներում պահվող անտիպ նյութեր: Դրանք վերաբերում են XIX դ. վերջից մինչև XXI դ. մեր օրերն ընկած շրջանին: XIV դ. մինչև XX դարասկիզբն ընդգրկող Թուխ Մանուկ սրբավայրերի վերաբերյալ նոր կամ քիչ հայտնի փաստագրական տվյալներ հեղինակը վեր է հանում ազգագրական, բանագիտական, պատմական, մատենագրական, ձեռագրագիտական, վիմագրական, գեղարվեստական և այլ տպագիր ու անտիպ սկզբնաղբյուրներից ու XIX դ. վերջի և XX դ. սկզբի մամուլից: 2) *Հետազոտական.* հավաքագրած նյութերի վերլուծության և դասակարգման հիման վրա առաջին անգամ ներկայացվում են ՀՀ-ում, Արևմտյան Հայաստանում և Ջավախքում մինչ օրս հեղինակին հայտնի դարձած գործող, լքված և անհետացած Թուխ Մանուկ սրբավայրերի աշխարհագրական սփռվածությունը, տիպերը (ծառ, քար, մատուռ, եկեղեցի, աղբյուր և այլն, կամ՝ մի քանի բաղադրիչներից բաղկացած, կրկնակի անուններով և այլ սրբավայրերի հետ ուխտագնացության համալիր կազմող Թուխ Մանուկ սրբավայրեր), պաշտամունքային համալիրը (ուխտագնացություն, գործառույթ, այցելության ժամկետ, ծես), սրբավայրերին վերաբերող հավատալիքները: Մասնակի վերլուծության են ենթարկվում Թուխ Մանուկներին առնչվող երգերը, կատարվում է համեմատություն Թուխ Մանուկների և ժողովրդական այլ սրբավայրերի միջև, դուրս են բերվում Թուխ Մանուկի կերպարի հիմնական կողմերը և ըստ վերը բերվածի՝ կատարվում է սրբավայրերի դասակարգում:

Առաջին՝ «Թուխ Մանուկ սրբավայրերի պատմական հիշատակությունները» գլխում, Կ. Հովհաննիսյանը վերլուծում է թեմային առնչվող սկզբնաղբյուրները: Ամենահին սրբատեղին հիշատակվում է XIV դ. վերջով, ամենահին եկեղեցին՝ XVII-XVIII դդ., Թուխ

Մանուկ անվանն առնչվող ամենահին Ավետարանը՝ 1271 թ.: Ատենախոսը Թուխ Մանուկների աշխարհագրությունը դիտարկում է նաև ըստ ներմարզային տեղաբաշխվածության, ինչի արդյունքում վեր է հանում ուշագրավ օրինաչափություն. Շիրակի մարզի Ամասիայի ենթաշրջանում Թուխ Մանուկներ չկան, իսկ Արարատի մարզում առկա են Վեդու և Արտաշատի շրջանների և Երևանի մերձակա գյուղերում (էջ 43) և այլն: Թուխ Մանուկներով ամենահարուստ մարզն Արագածոտնն է, ամենաաղքատը՝ Արմավիրը՝ մեկ սրբավայր: Ուսումնասիրելով սրբավայրերում առկա բաղադրիչները՝ հեղինակը եզրահանգում է, որ Թուխ Մանուկը հիմնադրվում է որպես այդպիսին սրբավայրն այդպես անվանվելուց հետո և ոչ թե շինության հնարավոր թվականից կամ բնական բաղադրիչների առկայության փաստից ելնելով (էջ 48-49):

Երկրորդ գլխում՝ «Թուխ Մանուկ սրբավայրերի պաշտամունքը», հեղինակը դասդասել է նույնանուն սրբավայրեր կատարվող ուխտագնացություններն ու դրանց ժամկետները, սրբավայրերի գործառույթները, ծեսերը՝ մատաղ, բժշկություն, զավակատվություն և այլն: Թեև վերջիններիս մասին հիշատակություններ կան նաև գրավոր սկզբնաղբյուրներում, սակայն դրանց գոյությունը XX դ. կեսերից մինչև XXI դ. փաստարկվում է բացառապես հեղինակի գրանցած դաշտային նյութերով:

Շարունակելով վաստակաշատ գիտնական Ա. Մնացականյանի գործը, ով «Թուխ մանուկ» հուշարձանների մասին» հոդվածում (ՊԲՀ, 1976, N 2, էջ 189-204) անդրադառնում է նույնանուն ավետարաններին, Կ. Հովհաննիսյանը տպագիր և անտիպ սկզբնաղբյուրների հիման վրա գիտական հետազոտության դաշտ է բերում նորահայտ Թուխ Մանուկ Ավետարաններ և դրանց հետ կապված պատմաազգագրական բնույթի ուշագրավ տվյալներ:

Ատենախոսը կատարում է Թուխ Մանուկ սրբավայրերի համեմատություն՝ վերհանելով դրանց ընդհանրություններն ու առանձնահատկությունները: Հեղինակը եզրահանգել է, որ ժողովրդական քրիստոնեությունից ծնունդ առած այլ սրբավայրերը և Թուխ Մանուկներն ունեն միևնույն գործառութային, ծիսական, տիպական, տեղակայման և այլ ընդհանրություններ, սակայն Թուխ Մանուկների դեպքում արձանագրել է երեք հիմնական տարբերություն՝ սրբավայրի անվանումը, սրբավայրին բնորոշ բանահյուսությունը և Քրիստոսի հետ վառ արտահայտված կապը:

Սրբերին առնչվող երազատեսության վերաբերյալ ուսումնասիրություններն, անշուշտ, եղել են հետազոտողների դիտակետում, սակայն Կ. Հովհաննիսյանի անդրադարձն այս հարցին նորույթ է նրանով, որ հիմնված է դաշտային նյութի վրա, երկրորդ՝ վերաբերում են Թուխ Մանուկների հետ կապված երազներին: Երազների դասակարգումը հանգամանորեն ներկայացված է երրորդ գլխում՝ «Թուխ Մանուկ սրբավայրերի հետ կապված հավատալիքներն ու բանահյուսությունը»:

Նույն գլխում Թուխ Մանուկ սրբավայրերի օրինակով մատնանշված է այն, թե խորհրդային տարիներին ինչպես են ոչ կանոնական սրբավայրերը փոխարինել եկեղեցուն (էջ 104): Մեր օրերում պաշտամունքի շարունակականության և տարածվածության օրինակով ատենախոսը վկայակոչում է մի կարևոր երևույթ. ինչպես է Հայ Առաքելական Եկեղեցին ընդառաջ գնում ժողովրդական քրիստոնեությանը եթե ոչ կանոնականացման սկզբունքով, ապա գոնե հոգևոր-բարեպաշտական սովորությունների և ավանդույթի ուժով, ինչի վառ օրինակ է այդ անվամբ եկեղեցիների օծումը (էջ 103), Թուխ Մանուկներում քահանայի կողմից մատաղի օրհնությունը (էջ 63): Կ. Հովհաննիսյանը քանիցս գրում է, որ ժողովուրդը Թուխ Մանուկին ընկալում է որպես Հիսուս Քրիստոս, ընդհանրացնում Քրիստոսին անմիջականորեն առնչվող սրբությունների՝ Ս. Նշանի, և Ավետարանի հետ: Ատենախոսի բացահայտումները կարող են հայեցակարգի մշակման հիմք դառնալ ժողովրդական քրիստոնեության որոշ դրսևորումներ կանոնականացնելու գործընթացում, ինչու չէ, նաև պատասխանել այն հարցերին, թե արդյո՞ք Թուխ Մանուկ սրբավայրերը կշահեն, եթե դրանք Եկեղեցու կողմից պաշտոնական կարգավիճակ ստանան կամ արդյո՞ք այդ հարցն արդիական է:

Գիտական բարեխղճությամբ և պատասխանատվությամբ արժանին մատուցելով Թուխ Մանուկն ուսումնասիրած հեղինակներին, որոնց աշխատանքների գերակշիռ մասն ամփոփված է «Թուխ Մանուկ» նստաշրջանի ժողովածուում (խմբագիր՝ Ս. Հարությունյան, Ա. Քալանթարյան, Երևան, 2001), Կ. Հովհաննիսյանը մեկ առ մեկ քննում է նրանց վարկածները՝ ներկայացնելով իր դիրքորոշումը, որը հիմնավորել է միջգիտակարգային վերլուծություններով: Նա իրավամբ նշում է, որ նախորդ հեղինակները ելակետ են ընդունել Թուխ Մանուկ անվան քննությունը՝ հիմնվելով արդեն իսկ առկա ազգագրական, բանագիտական, լեզվաբանական, դիցաբանական տվյալների վրա: Սակայն

շրջանցել են նույնանուն սրբավայրերի ուսումնասիրությունը և կենդանի պաշտամունքի մասին վկայող դաշտային նյութը, հազվադեպ բացառությամբ, ինչը, ըստ Կ. Հովհաննիսյանի, սահմանափակում է Թուխ Մանուկն ամբողջության մեջ դիտարկելու և բացահայտելու աշխատանքը:

Ատենախոսությունն ամբողջացնում է քառամաս հավելվածը, որում հեղինակը կազմել է իրեն հայտնի 196 Թուխ Մանուկ սրբավայրերի աղյուսակ (սրբավայրի գտնվելու վայրը, տեսքը, Թուխ Մանուկի կերպարը, ուխտագնացության օրերը, ծիսական արարողությունները, գործառույթները): Հիշատակվել են անհայտ կամ գոնե թե քիչ հայտնի ծեսեր, ինչպես՝ Արագյուղի Թուխ Մանուկի քարի հետ կապված ծեսը, Պտղնիի Թուխ Մանուկում Տրնդեզին և Զատկին կատարվող աղի և կրակի ծեսը (Հավելված, էջ 166), Արտաշատի Թուխ Մանուկում աշտանակների ավազով կատարվող ծեսը (Հավելված, էջ 169), Ծովազարդի Թուխ Մանուկներից մեկում շուշպաներով կատարվող ծեսը (Հավելված, էջ 172) և այլն: Երկրորդ բաժնում ներկայացված են Թուխ Մանուկի մասին ավանդազրույցներ՝ հիմնականում դաշտային սկզբնաղբյուրներից: Երրորդ հատվածում հեղինակը մեկտեղել է աշխատանքում հիշատակված Թուխ Մանուկների գեբակշիռ մասի լուսանկարները: Սա կարևորվում է նախ այն բանի համար, որ դրանցից շատերն առաջին անգամ են գիտական հանրությանը ներկայացվում, երկրորդ՝ այդ լուսանկարներն այլևս ամրագրել են սրբավայրի տվյալ ժամանակի տեսքը և հետագայում դրա կրած արտաքին կամ այլ փոփոխություն կարող է պատկերացում տալ սրբավայրի մշակութային ընկալումների վերաբերյալ: Չորրորդ մասում տեղադրված է Թուխ Մանուկ սրբավայրերի քարտեզը, որը Հ. Սարգսյանի կազմած քարտեզից հետո երկրորդն է, սակայն առաջինը՝ ուխտավայրերի թվով:

Այսպիսով, Կ. Հովհաննիսյանն առաջադրել է խնդիրներ, որոնք վերլուծել է ճիշտ ընտրված մեթոդաբանությամբ, բազմաբովանդակ գրականության, արխիվային փաստաթղթերի և մեծածավալ դաշտային նյութի օգտագործմամբ և հանգել փաստարկված եզրահանգումների: Ատենախոսության գիտական և գործնական արժեքը հույժ կարևոր է, քանզի այն առաջին համապարփակ գիտական անդրադարձն է Թուխ Մանուկ երևույթին և պահանջված է ինչպես տեսական, այնպես էլ գործնական դաշտում: Այս ամենով հանդերձ՝ ունենք որոշ առաջարկներ և նկատառումներ:

• 15-րդ էջում նշվում է՝ «...վերջին տասնամյակներում հաճախացել է Թուխ Մանուկ սրբավայրերի վերակառուցումն ու օծումը որպես եկեղեցի»: Հայ հոգևոր իրականության մեջ նոր կամ վերակենդանացող երևույթ է եկեղեցի օծել ժողովրդական սրբի անունով: Ցանկալի է ճշտել՝ այսօր Հայ Առաքելական Եկեղեցին կամ հոգևորականները ինչո՞վ են բացատրում կանոնական սրբատեղին ոչ կանոնական, առավել ևս ոչ քրիստոնեական սրբի անունով օծելը: Արդյո՞ք եկեղեցու օծման վերաբերյալ կաթողիկոսական կոնդակում կամ թեմական առաջնորդի հրամանում որևէ անդրադարձ լինում է Թուխ Մանուկ անվանը:

• Հիմնվելով բանասացների հաղորդումների վրա՝ հեղինակն իրավամբ գրում է, որ ժողովուրդը Հիսուսին և Թուխ Մանուկին հաճախ նույնացնում է, իսկ Թուխ Մանուկը Քրիստոսի անվանումներից մեկն է: Ցանկանում եմ հեղինակի ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, որ մատենագրության մեջ, ինչպես նաև մեկնողական ու կանոնական բնույթի գրվածքներում, թեկուզ և մերժողական հորդորով, Թուխ Մանուկը չի հիշատակվում, այն դեպքում, երբ ցուցված աղբյուրներում ժողովրդական մշակույթի, և պաշտոնական քրիստոնեության կողմից չընդունված հավատալիքների մասին տարաբնույթ անդրադարձներ կան:

• 81-82 էջերում նշվում է ամեն տարի՝ օգոստոսի 28-ին, Էջմիածնում պահվող Թուխ Մանուկ Ավետարանին կատարվող ուխտագնացության մասին: Կարելի է հստակեցնել՝ Ավետարանին ուխտի են գնում Էջմիածնի Մայր տաճա՞ր, թե՞ այն տարվում է քաղաքի այլ վանք կամ եկեղեցի:

• Հեղինակը չի գրել իր աշխատանքի կարևորությունը հավելյալ անգամ մատնանշող փաստ, այն է՝ ատենախոսությունում տեղ գտած 196 Թուխ Մանուկներից քանի՞սն են հայտնաբերվել դաշտային աշխատանքների ընթացքում:

• Ըստ ամենայնի՝ ծավալի սահմանափակումներով պայմանավորված, Թուխ Մանուկ սրբավայրերի «տերերին», այդ իրավունքի ժառանգորդության փոխանցմանը և առհասարակ սրբավայրը խնամողի ինստիտուտին անդրադարձ չկա, ինչը, կարծում ենք, կարտացոլվի ատենախոսության հրատարակությունում:

Կ. Հովհաննիսյանը, թեև առաջնային խնդիր չի ձևակերպել Թուխ Մանուկ երևույթի ծագումնաբանությունը, սակայն, գիտական հեռատեսությամբ ուրվագծել է անկյունքա-

բային հարցադրումներ, որոնք հետագա ուսումնասիրությունների ընթացքում կարող են տանել դեպի Թուխ Մանուկի կերպարի ամբողջական բացահայտում, օրինակ՝ Թուխ Մանուկ սրբավայրերում քարի առկայությունը (էջ 11), երազում հայտնված Թուխ Մանուկի կերպարը (էջ 98), նույնանուն սրբավայրերի տարածվածության արեալը, դրանցում կատարվող ծեսերը և այլն:

Վերը ներկայացված նկատառումները որևէ կերպ չեն ստվերում ատենախոսական աշխատանքի գիտական արժեքն ու արդիականությունը: Ատենախոսությունը և դրա հիմնական դրույթներն արտացոլող սեղմագիրը լիովին համապատասխանում են ԲՈԿ-ի կանոնակարգով թեկնածուական աշխատանքներին ներկայացվող պահանջներին: Ուստի՝ միջնորդում եմ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում գործող մասնագիտական խորհրդի մեծարգո անդամների առաջ՝ Կարեն Հովհաննեսի Հովհաննիսյանին Է.00.04 «Ազգագրություն» մասնագիտությամբ շնորհելու պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան՝ հրապարակային պաշտպանության ներկայացված «Թուխ Մանուկ սրբավայրեր (պատմաազգագրական ուսումնասիրություն)» ատենախոսության համար:

Պաշտոնական ընդդիմախոս՝
Պատմական գիտությունների թեկնածու Հ. Ա. Աբրահամյան

Պ. գ. թ. Հ. Աբրահամյանի ստորագրությունը հաստատում եմ՝
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
գիտական գծով փոխտնօրեն Ա. Ա. ԲՈԲՈԽՅԱՆ

10.03.2020